**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը**

---

# ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 3 սեպտեմբերի 2013թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ֆ. Թոխյանի
Անդամակցությամբ՝ Վ. Պողոսյանի
Կ. Բալայանի

Քննության առնելով քաղաքացի Գարեգին Հովսեփյանի անհատական դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը,

**Պ Ա Ր Զ Ե Ց.**

Քաղաքացի Գարեգին Հովսեփյանը ՀՀ սահմանադրական դատարան է դիմել 15.08.2013թ.: Դիմողը խնդրել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 499.9-րդ հոդվածի դրույթները ճանաչել ՀՀ Սահմանադրության 22-րդ եւ 42-րդ հոդվածներին հակասող եւ անվավեր:

Սույն անհատական դիմումի նախնական ուսումնասիրությունը ցույց տվեց.

1. Դիմողի կարծիքով՝ վիճարկվող հոդվածի դրույթները հակասում են Սահմանադրությանն այնքանով, որքանով վերաբերում են օտարերկրյա պետությունների դատավճիռների ճանաչմանը՝ պատասխանատվություն սահմանող կամ պատասխանատվությունը խստացնող օրենքին հետադարձ ուժ տալու առումով:

2. Ներկայացված դիմումը համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27, 28 եւ 69-րդ հոդվածների պահանջներին:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31 եւ 69-րդ հոդվածներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

**Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. «Քաղաքացի Գարեգին Հովսեփյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 499.9-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունել քննության:

2. Գործով որպես պատասխանող կողմ դատավարությանը ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

**Նախագահող՝**

**Անդամներ՝**

3 սեպտեմբերի 2013 թվականի
ՍԴԴԿՈ/2-26